ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Վաղ նախադպրոցական տարիքի երեխաների

հոգեբանական առանձնահատկությունները

Մարտիրոսյան Արմինե Գագիկի

Արարարատի մարզի Մասիս համայնքի Գեղանիստի

«Մանուշակ» մ/մ ՀՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Գլուխ 1՝ Ն/դ տարիքի երեխաների հոգեբանական ընդհանուր բնութագիրը_____4

Գլուխ 2՝ Վաղ նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկությունների և հասակակիցների փոխհարաբերությունների հետազոտական մաս_____12

Եզրակացություն_____18

Առաջարկություններ_____19

Օգտագործված գրականության ցանկ_____20

Հավելվածներ_____21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Վաղ նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը ժամանակակից մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներից է:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախադպրոցական հաստատություններում մեծ կարևորություն ունի նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Ինչպես գիտենք նախադպրոցական տարիքը կարևորագույն շրջան է անձի կայացման և բնականոն զարգացման համար, որը հիմնականում կախված է երեխայի շրջապատող միջավայրից:

Հարկ է նշել, որ ընտանիքից բացի նախադպրոցականի անձի զարգացման մյուս կարևոր միջավայրը նախադպրոցական հաստատությունն է: Եվ հենց նախադպրոցական հաստատությունում է երեխան ձեռք բերում առաջին մանկական հասարակության ստեղծումը : Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել այնպիսի հեգեբանամանկավարժական մթնոլորտ, որտեղ կխթանվեն և կզարգանան նախադպրոցականի ձեռք բերված հմտություններն ու կարողությունները:

Վաղ նախադպրոցական տարիքը այն տարիքն, երբ երեխան աստիճանաբար փորձում է դրսևորել սեփական 'Ես'-ը և փորձում է դառնալ ինքնուրույն: Մտնելով մանկապարտեզ երեխան նոր տեսակի հարաբերությունների փորձ է ձեռք բերում:

Թեմայի նպատակը: Ուսումնասիրել վաղ նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկությունները և պարզել,թե՝ նախադպրոցական հաստատությունում, որ տարիքային խմբում է զարգացածհամագործակցային կարողությունները:

Գլուխ 1՝ Ն/դ տարիքի երեխաների հոգեբանական ընդհանուր բնութագիրը

Նախադպրոցական տարիքը ընդգրկում է երեխայ կյանքի 3-ից մինչ 6-7 տարեկանն ընկած ժամանակահատվածը: Ինպես նշում է Վ. Ս. Մուխինան, սա մեծ ձեռքբերումների փուլ է, որը նշանավորվում է երեխայի հաղորդակցական ոլորտի ընկալման, ինքնագիտակցության ձևավորման, ինքնասպասարկման և մի շարք այլ կարևոր փոփոխություններով: Արդեն 3 տարեկանում երեխան սկսում է գիտակցել իր աղջիկ կամ տղա լինելը: Սկզբնական շրջանում երեխան սկսում է նույնականացնել իրեն նույն սեռի ծնողի հետ՝ փորձելով ընդօրինակել նրա վարքը:

Հետագայում արդեն ընդօրինակումը շարունակում է հասակակիցների շփման ընթացքում: Վաղ մանկության շրջանում գտնվող երեխայի հաղորդակցման դրդապատճառները և միջոցները կտրուկ տարբերվում են կրտսեր դպրոցական տարիքի երեխայի հաղորդակցման դրդապատճառներից և միջոցներից՝ սկզբում գերիշխում է անձնական շահը՝ արժանանալ ուշադրության, սիրո, այնուհետև՝ ճանաչողականը՝ հաղորդակցման արդյունքում որևէ նոր բան իմանալ [1,էջ 8-9]:

Նախադպրոցական տարիքում կտրուկ կերպով աճում են ֆիզիկական և հոգեկան զարգացման հնարավորությունները, առաջացնելով նոր պահանջմունքներ, հետաքրքրություններ: Նախադպրոցական տարիքում փոփոխություն է լինում ակտիվության ոլորտում, եթե 2 տարեկան երեխաները հաճույքով կատարում են տարբեր շարժումներ՝ թռչկոտել, վազել և այլն, ապա նախադպրոցականները ավելի հաճախ են իրենց ակտիվությունը ուղղում ցանկալի արդյունքների հասնելու համար: Փոխվում է նախադպրոցականի հարաբերությունները հասակակիցների հետ: Նրանք ցանկանում են խաղալ այլ երեխաների հետ, ավագ նխադպրոցականները ընդհանրապես չեն սիրում միայնակ խաղալ, ձգտում են ինչ-որ բան պատմել ընկերոջը, նրա հետ միասին կատարել աշխատանքային հանձնարարությունը, նրանք անհանգստանում են մեկը մյուսի համար, առանց ընկերների ձանձրանում են [3,էջ 17-18]:

Նախադպրոցական տարիքը երեխայի կյանքի մեծ մասն է կազմում: Այս տարիքում երեխան բացահայտում է մարդկային հարաբերությունների աշխարհը, գործունեության տարբեր տեսակներ և մարդկանց սոցիալական գործառույթները: Նա մեծ ցանկություն ունի միանալ մեծահասակների կյանքին, ակտիվորեն մասնակցել դրան, ինչը, իհարկե, նրա համար դեռ անհասանելի է: Այս հակասությունից ծնվում է դերասանական խաղ՝ երեխաների անկախ գործունեություն՝ մոդելավորելով մեծերի կյանքը:

«Մեր աշխատանքային պրակտիկայում հանդիպել ենք բազմատիվ դեպքեր, երբ երեխան հագնելով մայրիկի կոշիկները մոդելավորել է մայրիկի դերը, մեկ այլ դեպքում երեխան մոդելավորում է ուսուցչի կամ դաստիարակի դերը, իսկ տղաները հիմնականում մոդելավերում են հայրիկների դերը»:

Նախադպրոցական տարիքը բնութագրվում է երեխայի զարգացման սոցիալական նոր իրադրության առաջացմամբ: Շրջապատող մարդկանց մեջ նախադպրոցականի գրաված տեղը էականորեն տարբերվում է այն տեղից, որը բնորոշ է վաղ մանկական տարիքի երեխային: Երեխան տարական պարտականություններ է ձեռք բերում: Համատեղ գործողությունը հերթափոխվում է մեծահասակների ցուցումների ինքնուրույն կատարմամբ: Առաջին անգամ հնարավոր է դառնում քիչ թե շատ հետևողականորեն և ըստ որոշակի ծրագրի երեխային գիտելիքներ հաղորդել: Սակայն ինչպես ցույց է տվել Լ.Ս. Վիգոտսկին, այդ ծրագրիրը կարող է իրագործվել միայն այն չափով, ինչ չափով այն երեխայի համար սեփական ծրագիր է դառնում:

Նախադպրոցական տարիքի էական առանձնահատկություններից մեկը տարեկիցների հետ որոշակի փոխհարաբերությունների հաստատումը և «մանկական հասարակության» ստեղծումն է: Այլ մարդկանց նկատմամբ երեխայի սեփական ներքին դիրքորոշումը բնութագրվում է սեփական «ես»-ի և արարքների գիտակցվածության աճով, մեծերի կյանքի, գործունեության ու փոխհարաբերությունների նկատմամբ ցուցաբերվող հսկայական հետաքրքրությամբ [3, էջ 59-60]:

«Հարկ եմ համարում նշել որ երեխան առաջին անգամ տարեկիցերի հետ սկսում է շփվել մանկապարտեզում և հենց այստեղ է երեխան ձեռք բերում հասակակիցնեչի հետ շփման առաջին փորձերը»:

Հետևաբար ստորև ներկայացնում եմ.

Նախադպրոցական կրթության նպատակները և խնդիրները

1. Նախադպրոցական կրթության նպատակներն են՝

ա) երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը.

բ) նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը.

գ) դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

2. Նախադպրոցական կրթության խնդիրներն են՝

ա) նախադպրոցական տարիքի երեխաների մեջ մայրենի լեզվով հաղորդակցվելու և հաշվելու տարական կարողությունների զարգացումը.

բ) նախադպրոցական տարիքի երեխայի խնամքը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը.

գ) վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, աշխատանքային տարրական հմտությունների և կարողությունների ձևավորումը.

դ) հայրենիքի նկատմամբ սիրո սերմանումը, ընտանիքի, ազգային ավանդույթների, մայրենի լեզվի, ազգային արժեքների նկատմամբ հարգանքի, սեփական անձի, շրջապատի և շրջակա միջավայրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորումն ու արմատավորումը.

ե) երեխայի անհատականության ձևավորումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը.

զ) նախադպրոցական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ կրթությունը շարունակելու պատրաստվածության ապահովումը.

է) ընտանիքին սոցիալ-մանկավարժական աջակցության ցուցաբերումը [8 , ՀՀ ՕՐԵՆՔԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Հոդված 6.]:

Շատ կարևոր է նշել, որ ըստ Կարինե Խաչատրյանի՝ նախադպրոցական տարիքում կարևոր նշանակություն ունի ինքնակարգավուրման զարգացումը: Նախադպրոցական տարիքում երեխաների վրա ազդում է երկու գործոն՝ մեծահասակի վարքագիծը և մեծահասակի արտահայտած արժեքներն ու հավատալիքները: Մանուկները կրկնօրինակում են բառեր և վարքագիծ, իսկ ավելի մեծ երեխաները արդեն սկսում են ձևավորել քննադատություն և կայացնել որոշումներ, որոնք հիմնված են իրենց դիտումների վրա: Նրանք ներքնայնացնում են այն, ինչ տեսնում են, այդ թվում և մեծահասակների արժեքները, հատկապես նրանց, ում հուզականորեն կապված են: Եվ արդյունքում մշակում են իրենց սեփական վարքի համար չափանիշներ:

Ինքնակարգավորման զարգացման մյուս կարևոր աղբյուրը հասակակիցներն են, դաստիարակները, մշակութային գործոնները: Հասակակիցների հետ շփումը կարող է օգնել երեխային հասկանալու ուրիշների մտադրությունները և արդյունքում ձևավորել համապատասխան վարքագիծ: Սակայն հասակակիցների հետ շփումները կարող են նաև հակառակ ազդեցությունը ունենալ:

Կենտրոնական դեր է խաղում նաև խաղը ՝ նախադպրոցականի հիմնական գործունեության ձևը: Երեխաները խաղի միջոցով ճանաչում են տարբեր դերեր, վիճակներ, կարողանում են հասկանալ և ճանաչել դիմացինի հույզերը [2, էջ-21]:

՝Ինչպես արդեն նշեցինք երեխաների նոր փորձի և գիտելիքների ձեռքբերմանը նպաստում է երեխայի խաղը, երեխաները սկսում են խաղալ դերասյուժետային խաղեր, որոնցում հաճախ նկատվում են մեծահասակների դերեր « Տուն –տունիկ», «Բժիշկ- բժիշկ»: Այս խաղերի միջոցով երեխաները կարծես ծանոթանում են ՝մեծերի աշխարհին’: Այսպիսով երեխաներն աստիճանաբար հարմարվում են նաև իրենց համար նոր միջավայրին ինչը մեծ ուրախություն է պարգևում թե ծնողին, թե դաստիարակին’:

Դերային խաղը կամ, ինչպես երբեմն անվանում են, ստեղծագործական խաղը ի հայտ է գալիս նախադպրոցական տարիքում: Սա մի գործընթաց է, որի ժամանակ երեխաները ստանձնում են մեծահասակների դերը և ընդհանրացված տեսքով, խաղային պայմաններում վերարտադրվում են մեծերի գործողությունները և նրանց միջև փոխհարաբերությունները: Երևակայության խաղի պլանն այնքան կարևոր է,

որ առանց դրա խաղը պարզապես գոյություն չունի: Բայց չնայած խաղի մեջ կյանքը ընթանում է ներկայացուցչության տեսքով, այն հուզականորեն հագեցած է և դառնում է իրական կյանք երեխայի համար:

Խաղը նպաստում է ոչ միայն հասակակիցների հետ հաղորդակցության ձևավորմանը, այլև երեխայի կամայական պահվածքին: Անձի պահվածքի վերահսկման մեխանիզմը `կանոններին ենթարկվելը, զարգանում է հենց խաղի մեջ, այնուհետև դրսևորվում է նաև գործունեության այլ տեսակների մեջ: Կամայականությունը ենթադրում է վարքագծի այնպիսի ձև, որին երեխան հետևում և վերահսկում է: Խաղի մեջ մոդելը հանդիսանում է ոչ թե մեծահասակների բարոյական կամ այլ չափանիշներ, այլ մեկ այլ անձի մոդելը, որի վարքը կրկնօրինակում է երեխան: Ինքնատիրապետումը ծնվում է է միայն նախադպրոցական տարիքի ավարտին, ուստի սկզբում երեխան արտաքին հսկողության կարիք ունի՝ իր խաղընկերների կողմից: Երեխաները առաջին հերթին վերահսկում են միմյանց, իսկ հետո ՝ յուրաքանչյուրը ինքն իրեն : Արտաքին հսկողությունը աստիճանաբար դուրս է գալիս վարքի կառավարման գործընթացից, և պատկերը սկսում է ուղղակիորեն կարգավորել երեխայի պահվածքը [5,էջ 80-81]:

Նախադպրոցական մանկությունը մարդկային հարաբերությունների աշխարհի ճանաչման շրջան է: Երեխան նրանց մոդելավորում է դերային խաղով, ինչը նրա համար դառնում է առաջատար գործունեություն: Խաղալիս նա սովորում է շփվել հասակակիցների հետ:Նախադպրոցական մանկությունը ստեղծագործական ժամանակաշրջան է: Երեխան խոսքը սովորում է ստեղծագործորեն, նա ստեղծագործական երևակայություն ունի: Նախակրթարանն իր մտածողության առանձնահատուկ տրամաբանությունն ունի ՝ հնազանդվելով փոխաբերական ներկայացուցչությունների դինամիկային:

Սա անհատականության սկզբնական ձևավորման ժամանակաշրջանն է: Իրենց վարքի հետևանքների, ինքնագնահատականի հետևանքների բարդացման և իրազեկման, հուզական կարիքների ոլորտի նոր զգացմունքների և դրդապատճառների հարստացման հուզական կանխատեսման առաջացումը, վերջապես, աշխարհի հետ առաջին հիմնական կապերի առաջացումը և կյանքի,

աշխարհի հետագա կառուցվածքի հիմքերը - սրանք անձնական զարգացման հիմնական հատկանիշներն են [5,էջ 89] :

Երեխայի շփումը մեծահասակների և հասակակիցների հետ.

Իր մասին երեխայի ճշգրիտ պատկերացումների ձևավորումը ենթադրում է իր անհատական փորձի և իր մասին գնահատականների և գիտելիքների ներդաշնակ համադրություն, որը երեխան կուտակում է ուրիշների հետ շփվելու միջոցով: Եթե այս ներդաշնակությունը խախտվում է, ապա երեխայի պատկերացումները սկսում են աստիճանաբար խեղաթյուրվել դեպի ուռճացված կամ պակաս: Սակայն դա տեղի է ունենում երեխայի անհատական փորձի սակավության կամ շրջապատի հետ նրա շփման անբարենպաստ պայմանների պատճառով:

Նախադպրոցականի մոտ բարձր ինքնագնահատականի ձևավորման պատճառը կարող է լինել նրա շփումը մեծահասակների հետ, որը մշտապես ուռճացնում է նրա հաջողություններն ու ձեռքբերումները:

Այս դիտարկումներն առկա են նաև այլ հեղինակների աշխատություններում, որոնք ընդգծում են, որ երեխայի անինքնավստահությունը, ուրիշների հանդեպ նրա անվստահությունը, ինքն իր նկատմամբ թերահավատությունը երեխայի անբարենպաստ հարաբերությունների հետևանք են իրեն շրջապատող մարդկանց հետ [5,էջ 235-236]:

Մ. Ի. Լիսինայի անցկացրած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մոտ 4 տարեկան հասակում հասակակիցը դառնում է ավելի նախընտրելի հաղորդակցման գործընկեր, քան մեծահասակը: Հասակակիցների հետ շփումը առանձնանում է մի շարք առանձնահատկություններով, որոնց թվում են հաղորդակցման միջոցների հարստությունն ու բազմազանությունը, հուզական հագեցվածությունը, ոչ ստանդարտ և կարգավորված հաղորդակցական գործողությունները:

Նախադպրոցական տարիքում հասակակիցների հետ շփման զարգացումը անցնում է մի շարք փուլերով: Դրանցից առաջինում (2-4 տարեկան) հասակակիցը համարվում է հուզական և գործնական փոխազդեցության գործընկեր , որը հիմնված է երեխայի ընդօրինակման և հուզական վարակի վրա: Հաղորդակցման հիմնական պահանջմունքը հասակակիցների մասնակցության անհրաժեշտությունն է, որն

արտահայտվում է երեխաների զուգահեռ (միաժամանակյա և նույնական) գործողություններով: Երկրորդ փուլում (4-6 տարի) առաջանում է իրավիճակային-գործնական համագործակցության անհրաժեշտություն հասակակիցների հետ: Համագործակցությունը, ի տարբերություն մասնակցության, ենթադրում է խաղային դերերի և գործառույթների բաշխում, ինչը նշանակում է նաև գործընկերոջ գործողությունների և ազդեցությունների դիտարկում: Հաղորդակցության բովանդակությունը դառնում է համատեղ (հիմնականում խաղային) գործունեություն: Այդ նույն փուլում առաջանում է հասակակցին հարգելու և ճանաչելու պահանջմունք: Երրորդ փուլում (6-7 տարեկանում) հասակակիցների հետ շփումը ձեռք է բերում ոչ իրավիճակային առանձնահատկություններ, շփման բովանդակությունը շեղվում է ակնառու իրավիճակից, սկսում են ձևավորել ընտրական նախասիրություններ երեխաների միջև:

Ինչպես ցույց են տվել Ռ. Ա. Սմիրնովայի և Ռ. Ի. Թերեշչուկի ՝ տվյալ ուղղությամբ կատարված աշխատանքները, երեխաների ընտրական կապվածությունն ու նախապատվությունները միմյանց հանդեպ ծագում են շփման հիման վրա: Երեխաները նախընտրում են այն հասակակիցներին, ովքեր համարժեքորեն բավարարում են իրենց հաղորդակցման պահանջմունքները: Ընդ որում, դրանցից գլխավորը մնում է իրենց հասակակիցների նկատմամբ ընկերական վերաբերմունքի, ուշադրության և հարգանքի պահանջմունքը:

Այսպիսով՝ ժամանակակից հոգեբանության մեջ միջանձնային հարաբերությունների ընկալման տարբեր մոտեցումներ կան, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուսումնասիրության առարկան:

Երեխաների հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները պարզելու և նրանց դաստիարակության համար ռազմավարություն մշակելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես են դրսևորվում նրանց հոգեբանական առանձահատկությունները: Առանց դրա անհասկանալի է մնում, թե ինչն է անհրաժեշտ բացահայտել և դաստիարակել. խմբում երեխայի սոցիալական կարգավիճակը, սոցիալական հատկանիշների վերլուծության ունակությունը, համագործակցելու ցանկությունը և ունակությունը, հասակակիցների հետ շփման պահանջմունքը: Անկասկած, այս բոլոր կետերը կարևոր են և պահանջում են և՛ հետազոտողների, և՛ մանկավարժների հատուկ ուշադրություն [6, էջ 6-8]:

Արդեն մանկապարտեզի ավագ խմբում բավական ամուր հարաբերություններ են ստեղծվում հասակակիցների միջև: Երեխաները սկսում են տարբեր դիրքեր զբաղեցնել հասակակիցների շրջանում. ոմանք ավելի նախընտրելի են երեխաների մեծամասնության համար, իսկ մյուսները՝ ավելի քիչ: Հասակակիցների շրջանում երեխայի գրաված դերը մեծ նշանակություն ունի: Եվ նրա անձնական և սոցիալական զարգացումը կախված է նախադպրոցականի՝հասակակիցների շրջանում գրաված դիրքից: Խմբում երեխաների գրաված դիրքը (նրա ընդունված կամ մերժված լինելու աստիճանը) հոգեբանության մեջ բացահայտվում է սոցիոմետրիկ մեթոդներով, որոնք թույլ են տալիս բացահայտել երեխաների փոխադարձ (կամ ոչ փոխադարձ) նախասիրությունները միմյանց նկատմամբ: Այս մեթոդներում երեխան երևակայական իրավիճակներում ընտրում է իր խմբի նախընտրելի և անցանկալի անդամներին [6,էջ 13]:

Երեխաները, համապատասխան դիրք չզբաղեցնելով ընտանիքում այնպիսի վարքագծի ձևերեն ընտրում, որոնք կօգնեն զգալ իրենց կարևորությունը և ծնողների սերը և դրա համար օգտագործում են բոլոր հնարավոր տարբերակները: Այդ միջոցներից մեկը կարող է նույնիսկ լինել հիվանդությունը, այս պարագայում զգում է, որ ծնողների ուշադրությունն ամբողջությամբ պատկանում է իրեն: Բացի դրանից, հիվանդ երեխայի մահճակալի մոտ ծնողները կարծես մի պահ մոռանում են իրենց տարաձայնությունների մասին և երեխան հիվանդությունն ընկալում է որպես ընտանիքի բարելավման միջոց [7, էջ 21-22]:

Գլուխ 2՝ Վաղ նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկությունների և հասակակիցների փոխհարաբերությունների հետազոտական մաս:

Երեխաների հետ աշխատանքի պլանավորումը և կատարումը:

Մեր աշխատանքի նպատակն է փորձարարական հետազոտությունների միջոցով ուսումնասիրելով նախադպրոցական տարիքի հոգեբանական առանձնահատկությունները, պարզել երեխաների փոխհարաբերությունները միմյանց հետ:

Հետազոտությունն իրականացվել է Արարատի մարզի Մասիս համայնքի Գեղանիստի Մանուշակ մ/մ ՀՈԱԿ-ում՝ կրտսեր, միջին և ավագ խմբերում: Հետազոտությունը մասնակցել է թվով 90 երեխա՝ 30 ավագ, 30 միջին և 30 կրտսեր: Հետազոտությունն անցկացվել է 1 ամսվա ընթացքում:

Նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված երեխաների փոխհարաբերություններին ուղված հետազոտությունները կազմակերպվել են մանկապարտեզի բոլոր տարիքային խմբերում:

Պարապմունքներն անցկացել են ինչպես ՀՀ ԿԳՄՍ Նախարարության կողմից հաստատված համալիր ծրագրերով, այնպես էլ այլ ծրագրերով և ձեռնարկներով:

Քանի որ հետազոտութան վայրը հստակ էր, ուստի՝ առաջին փուլում որոշվել և մշակվել են այն մեթոդները, որոնց միջոցով պետք է իրականացվեին հետազատական աշխատանքները: Երկրորդ փուլում երեխաների հետ տարված աշխատանքների արդյունքների հիման վրա մշակվել են մեթոդական ցուցումներ և խաղեր՝ ուղված միջանձնային հարաբերությունների բարելավմանը:

Կիրառված մեթոդներ

- Խաղային մեթոդ
- Հարցարան դաստիարակի համար
- Ուսուցման մեթոդ
- Խոսքային մեթոդ
- Դիտողական մեթոդ

Ինչպես արդեն նշվեց՝ հետազոտությունը կառարվել է մոտ մեկ ամսվա ընթացքում, մանկապարտեզի բոլոր տարիքային խմբերում: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել է ինչպես երեխաների հոգեբանական

առանձնահատկություններով պայմանավորված թէ խաղային գործունեությունը թե ուսումնադաստիարակչական գործընթացը:

Այժմ կներկայացնեմ վերը նշվածներից մեկ-երկու պարապմունք.

Խաղային գործունեությունը Կրտսեր խմբում

Այս տարիքային խմբում յուրաքանչյուր երեխա խաղում է հիմնականում իր նախընտրած խաղալիքով մենակ, կամ առավելագույնը 2 երեխայի հետ: Քանի որ 3 «Ես»-ի ձևավորման շրջանն է, ուստի նրանց բոլոր արարքները եսակնտրոն են: Այս տարիքում նրանք ձգտում են բավարարել խաղային գործունեության սեփական պահանջմունքը, ոչ թե համագործակցային կարողությունները:

Խաղային գործունեությունը Միջին և Ավագ խմբերում

Միջին և ավագ խմբերում փոխվում է երեխաների պահանջմունքները: Նրանք ձգտում են ունենքալ խաղընկեր: Նրանց մոտ արդեն ձևավորվում են համագործակցային հմտությունները: Նրանք հաճույքով համագործակցում են միմյանց հետ, խաղում կառուցողական և խմբակային այլ խաղեր:

Գեղարվեստական գրականության ընթացքում նույնիսկ բեմադրում են հեքիաթներ և խաղում դերային խաղեր, ինչը չենք կարող ասել կրտսեր երկրորդ խմբի մասին:

Կրտսեր խմբի գեղարվեստական գրականության ծրագրում ներառված է Լ. Տոլստոյի «Երեք արջերը» հեքիաթը: Հեքիաթի նպատակն է հետաքրքրություն առաջացնել դեպի գիրքը, նկարների միջոցով փորձել ձևավորել կապակցված խոսք: Սովորեցնել ճիշտ կառուցել պարզ նախադասություններ:

Անհրաժեշտ նյութեր՝ «Երեք արջերը» հեքիաթի գիրքը կամ քարտեր, նկարներ: Պարապմունքից մեկ օր առաջ գրքի անկյունում դնել հեքիաթի նկարները և օրվա ընթացքում երեխաներին խրախուսել, ուղղորդել ինքնուրույն դիտել դրանք: Ապա՝ հարցնել, թե ում, որ նկարն է դուր եկել, իսկ որը՝ ոչ, և ինչու:

Պարապմունքը երեխաներին առավել հետաքրքիր դարձնելու համար դաստիարակը պետք է ունենա հեքիաթին համապատասխան երեք արջ, երեք

մահճակալ, երեք ափսե՝ մեծ, միջին և համեմատաբար փոքր չափերի, ինչպես նաև տիկնիկ, ում պայմանականորեն կանվանեն Մաշա:

Պարապմունքի ընթացում դաստիարակն ու երեխաները նստում են շրջանափձև, այնպես, որ հնարավոր լինի բոլոր երեխաներին ցույց տալ գիրքը: Դաստիարակը ցույց է տալիս գրքի կազմը, ներկայացնում հեքիաթի անունը, հեղինակին, հետո՝ ընթերցում այն: Վերջում՝ հարցեիր միջոցով պարզում է երեխաների տպավորությունները: Հեքիաթի ընթերցումն ու խմբային աշխատանքի այս ձևը նպաստում են նաև երեխաների փոխհարաբերությունների բարելավմանը:

Կրտսեր խմբի խոսքի զարգացման և գեղարվեստական գրականության պարապմունքների ընթացքումպար պարզ դարձավ, որ կրտսեր խմբի երեխաների մոտ դեռ լիարժեք ձևավորված չէ համագործակցային կարողությունները:

Ավագ և Միջին խմբերում հետազոտության նպատակով անցկացվել է հետևյալ խաղը՝ **«Խաղ կծիկ»** , որը զարգացնում է հաղորդակցման, շփման ունակությունները:

Խաղի նկարագրությունը.

Խաղն օգնում է բացահայտել և շտկել երեխաների մոտ հաղորդակցման, շփման առկա դժվարությունները : Խաղն օգտակար է ինչպես միմյանց անծանոթ, այնպես էլ ծանոթ երեխաների հետ խմբային աշխատանքում : Երեխաները նստում են շրջանաձև: Դաստիարակը թելը փաթաթում է մատին և այն տալիս երեխաներից մեկին ու հարցնում, օրինակ՝ ինչ է քո անունը, ցանկանում ես ինձ հետ խաղալ, (երեխաները կարող են միյանց ուղղել ցանկացած հարց) երեխան ներկայանում է թելը փաթաթելով մատին, կծիկը փոխանցում է իրեն հաճելի մասնակցին ու տալիս հետաքրքրող հարցը: Խաղի վերջում թելի կծիկը վերադառնում է վարողին: Բոլորը տեսնում են, որ թելը միացրել է իրենց և մեկ ամբողջություն դարձրել, միևնույն ժամանակ ստանալով միմյանց մասին տեղեկություններ: [Ստեփանյան Ն.Ե. էջ 84]:
Հետազոտության նպատակով անցկացված պարապմունքները մեզ ցույց են տալիս, որ Ավագ և Միջին խմբերում համագործակցային կարողություններն արդեն ձևավորված են: Տես հավելված էջ 23-24

Հետազոտության նպատակով կազվել է հարցարան դաստրարակների համար: Յուրաքանչյուր դաստիարակ լրացնելով տարիքային խումբը պատասխանել է հարցերին, որի արդյունքները կտեսնենք դիագրամի տեսքով: Տես հավելված էջ 21


Կրտսեր խումբ
0%
40%
60%
Բավարար
Լավ
Լիարժեք


Միջին խումբ
Չշփվող
0%
Լավ
30%
Լիարժեք
70%
Լիարժեք
Լավ
Չշփվող


Ավագ խումբ
0%
50%
50%
Լիարժեք
Լավ
Չշփվող

Այսպիսով՝ ուսումնասրելով վաղ նախադպրոցական տարիքի երեխաների առանձնահատկությունները և իրականացնելով հետազոտությունը, պարզ դարձավ, որ մանկապարտեզի միջին և ավագ խմբերի երեխաներն ավելի հեշտ են հաստատում հասակակիցների հետ փոխհարաբերություններ, քան կրտսեր խմբում:

Եզրակացություն

Ուսումնասիրելով վաղ նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկությունները պարզեցինք, որ վաղ տարիքում հարմարվողականության և հասակակիցների հետ հաղորդակցման հաջողությունները մի փոքր ավելի դանդաղ են ընթանում:

Յուրաքանչյուր երեխայի անձի զարգացումը և ձևավորումը կախված է շրջակա միջավայրի ազդեցությունից: Շատ հաճախ մանկության տարիներին այս ազդեցությունը որոշիչ դեր է խաղում մարդու ամբողջ հետագա կյանքում: Երեխաները բացի ֆիզիկական պահանջմունքներից ունեն նաև հոգեկան կարիքներ, որոնց բավարարվածությունը շատ կարևոր է ընդհանուր զարգացման համար:

Ն.դ և կրտսեր տարիքի երեխայի համար շատ կարևոր է իմանալ, որ ինքը սիրված է: Եվ այդ սիրո պահանջմունքը պետք է բավարարի թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը, թե՛ նախադպրոցական հաստատությունում երեխայի հետ առնչվող ցանկացած աշխատակից:

Առաջարկություններ

Իրականացնելով ուսումնասիրություններ և ելնելով հետազոտության արդյունքներից մշակել եմ հետևյալ խորհուրդները և առաջարկել հետևյալ խաղային մեթոդը:

- Վաղ նախադպրոցական տարիքի երեխաներին ընդունել նախադպրոցական հաստատություն ավելի ջերմ և լինել ավելի հոգատար,
- Այս տարիքային խմբում պարապմունքներն անցկացնել խմբային տարբերակով,
- Երեխաներին տալ գործունեությոան սեփական տեմպի իրավունք,
- Հաճախ կազմակերպել հանդիպումներ այլ խմբերի հետ:

'Իմ սիրելի խաղալիքը' խաղային մեթոդ. զարգացնում է հաղորդակցման, շփման ունակությունները:

Խաղի նկարագրությունը

Նախապես ծնողի կամ դաստիարակի միջոցով երեխաներին ասում ենք, որ նրանք առաջին օրը կարող են գալ իրենց սիրելի խաղալիքի հետ: Սովորաբար այս տարիքում դա լինում է տիկնիկ կամ ավտոմեքենա, երբեմն էլ փափուկ խաղալիք: Քանի որ այս տարիքում երեխաները սկսում են նույնականացնել իրենց տիկնիկի կամ կենդանու հետ: Այդ խաղալիքները երեխայի համար կարող են դառնալ հուզական հաղորդակցման օբյեկտ, հանդես գալ որպես լավ ընկեր, որն ամեն ինչ ընդունում է և չի հասկանում չարը:

Երեխաները դաստիարակի հետ նստում են շրջանաձև: Առաջին երեխան ասում է իր անունը, այնուհետև՝ ներկայացնում է իր խաղալիքը և մոտենալով մեկ այլ երեխայի ասում է, 'Ի՞նչ է քո անունը, կցանկանաս միասին խաղանք:': Այսպես մինչև բոլոր մասնակիցները կներկայացնեն իրենց և իրենց սիրելի խաղալիքները: Ծանոթանալուց հետո դաստիարակը կարող է հայտարարել՝ քանի որ իրենց խաղալիքներն էլ են ծանոթացել, հավանաբար նրանք էլ են ուզում խաղալ միմյանց հետ:

Այսպիսով՝ այս մեթոդը կօգնի երեխաների միջև ավելի մտերիմ հարաբերություններ հաստատել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Երեխաների հետ հոգեբանական աշխատանքի Ուղեցույց Երևան 2018
2. Հոգեբանությունը և կյանքը ’, Զանգակ,
3. Տարիքային և մանկավարժական հոգեբանության խմբագիր Ա. Վ .Պետրովսկու Երևան 1977
4. Возрастная Психология М. 2005 702с
5. Кулагина И.Ю., Колюцкий В.Н. Возрастная психология Возрастная психология: Полный жизненный цикл развития человека. Учебное пособие для студентов высших учебных заведений. — М.: ТЦ «Сфера», 2001. - 464с.https://www.arlis.am/documentview.aspx?docID=90823
6. Смирнова Е. О. Межличностные отношения дошкольников: диагностика, проблемы, коррекция / Е. О. Смирнова, В. М. Холмогорова. — М.: Гуманитар. изд. центрВЛАДОС,
7. Хоментаускас Т. Семья глазами ребенка. - М.: Педагогика, 1989.
8. https://www.arlis.am/documentview.aspx?docID=90823

Հավելվածներ

<u>Երեխայի և հասակակիցների փոխհարաբերությունների ուսումնասիրման հարցարան դաստիարակի համար</u>

Ախտորոշման նյութեր – Դաստիարակի համար հարցարան , որը պարունակում է դատողություններ, որոնք վերաբերվում են երեխայի և հասակակիցների փոխհարաբերությունների առանձնահատկություններին:

<u>Արձանագրություն</u>

Դաստիարակի Ա.Ա ---------- Մարտիրոսյան Արմինե

Տարիքային խումբ	Երեխաների թիվը
Կրտսեր	30

N	Հարցեր	Ոչ բոլորը	Մեծ մասը	Բոլորը
1.	Առավոտյան ծնողներից հե՞շտ են բաժանվում	✓		
2.	Ձեր կարծիքով երեխաներն իրենց լա՞վ են զգում մանկապարտեզում		✓	
3.	Արդյո՞ք երեխաները հաճույքով են հաճախում մանկապարտեզ	✓		
4.	Մանկապարտեզում երեխաները սպասու՞մ են իրենց ընկերներին	✓		
5.	Հե՞շտ են շփվում խմբի երեխաների և այլ հասակակցների հետ	✓		
6.	Ներգրավվում են արդյո՞ք խմբային աշխատանքներում		✓	
7.	Սյուժետային խաղերի ընթացքում երեխաները հյուր գնում են խաղընկերոջը	✓		
8.	Դերային խաղերի ընթացքում երեխան հրավիրում է իր տուն կամ իր ծննդյան տոնին	✓		
9.	Արդյոք երեխաները լավ տրամադրությամբ են տուն գնում		✓	
10.	Երեխաները ոգևորվու՞մ են, երբ իրենց խրախուսում եք լավ արարքի համար		✓	

Տվյալների վերլուծություն

Կրտսեր խմբի հարցման արդյունքները ցույց տվեցին, որ երեխաների 60 տոկոսը դեռ չի հաստատել հասակակիցների հետ շփման լիարժեք ցուցանիշ, ինչն էլ բնորոշ է այս տարիքային

խմբին

Խմբի 40 տոկոսը լիարժեք շփվում է հասակակիցների հետ

Ողջ խմբի համագործակցությունը կազմում է 0 տոկոս

Երեխայի և հասակակիցների փոխհարաբերությունների ուսումնասիրման հարցարան դաստիարակի համար

Ախտորոշման նյութեր – Դաստիարակի համար հարցարան , որը պարունակում է դատողություններ, որոնք վերաբերվում են երեխայի և հասակակիցների փոխհարաբերությունների առանձնահատկություններին:

Արձանագրություն

Դաստիարակի Ա.Ա ----Լ.Հովհաննիսյան

Տարիքային խումբ	Երեխաների թիվը
Միջին	30

N	Հարցեր	Ոչ բոլորը	Մեծ մասը	Բոլորը
1.	Առավոտյան ծնողներից հե՞շտ են բաժանվում			✓
2.	Ձեր կարծիքով երեխաներն իրենց լա՞վ են զգում մանկապարտեզում			✓
3.	Արդյո՞ք երեխաները հաճույքով են հաճախում մանկապարտեզ			✓
4.	Մանկապարտեզում երեխաները սպասու՞մ են իրենց ընկերներին			✓

5.	Հե՞շտ են շփվում խմբի երեխաների և այլ հասակակցների հետ		✓	
6.	Ներգրավվում են արդյո՞ք խմբային աշխատանքներում			✓
7.	Սյուժետային խաղերի ընթացքում երեխաները հյուր գնում են խաղընկերոջը		✓	
8.	Դերային խաղերի ընթացքում երեխան հրավիրում է իր տուն կամ իր ծննդյան տոնին		✓	
9.	Արդյոք երեխաները լավ տրամադրությամբ են տուն գնում			✓
10.	Երեխաները ոգևորվու՞մ են, երբ իրենց խրախուսում եք լավ արարքի համար			✓

Տվյալների վերլուծություն

Միջին խմբի հարցման արդյունքները ցույց տվեցին, որ երեխաների 70 ունի հրաշալի հարաբերություններ հասակակիցների հետ

Խմբի 30 տոկոսը միջին մակարդակի

Բոլորովին չշփվող երեխաներ՝ 0 տոկոս

Երեխայի և հասակակիցների փոխհարաբերությունների ուսումնասիրման հարցարան դաստիարակի համար

Ախտորոշման նյութեր – Դաստիարակի համար հարցարան , որը պարունակում է դատողություններ, որոնք վերաբերվում են երեխայի և հասակակիցների փոխհարաբերությունների առանձնահատկություններին:

Արձանագրություն

Դաստիարակի Ա.Ա ---Ք.Խաչատրյան

Տարիքային խումբ	Երեխաների թիվը
Ավագ	30

N	Հարցեր	Ոչ բոլորը	Մեծ մասը	Բոլորը
1.	Առավոտյան ծնողներից հե՞շտ են բաժանվում		✓	

2.	Ձեր կարծիքով երեխաներն իրենց լա՞վ են զգում մանկապարտեզում			✓
3.	Արդյո՞ք երեխաները հաճույքով են հաճախում մանկապարտեզ			✓
4.	Մանկապարտեզում երեխաները սպասու՞մ են իրենց ընկերներին			✓
5.	Հե՞շտ են շփվում խմբի երեխաների և այլ հասակակցների հետ		✓	
6.	Ներգրավվում են արդյո՞ք խմբային աշխատանքներում		✓	
7.	Սյուժետային խաղերի ընթացքում երեխաները հյուր գնում են խաղընկերոջը		✓	
8.	Դերային խաղերի ընթացքում երեխան հրավիրում է իր տուն կամ իր ծնողյան տոնին		✓	
9.	Արդյոք երեխաները լավ տրամադրությամբ են տուն գնում			✓
10.	Երեխաները ոգևորվու՞մ են, երբ իրենց խրախուսում եք լավ արարքի համար			✓

Տվյալների վերլուծություն

Ավագ խմբի հարցման արդյունքները ցույց տվեցին, որ երեխաների 50 ունի հրաշալի հարաբերություններ հասակակիցների հետ

Խմբի 50 տոկոսն ունի միջին մակարդակի

Իսկ բոլորովին չունենք չշփվող երեխաներ 0


ԵՐԵՔ ԱՐՋԵՐԸ
ըստ Լ. Տոլստոյի

ԵՐԵՔ ԱՐՋԵՐԸ